# ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 02.05.2016թ.

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**
**թիվ 36/16**

ԳԲԽ-36/16 բողոքը քննող հանձնաժողովը, գործելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անունից և հիմք ընդունելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի՝ Երևանի քաղաքապետարանի կողմից «Առողջապահության ապահովագրություն» փաթեթի ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ԲԸՀԾՁԲ-16/3 ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2016թ. N 2 արձանագրության համաձայն՝ Ընկերության գնային առաջարկը հետագա գնահատման համար անընդունելի համարելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները դադարեցնելու մասին «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից 13.04.2016թ. ներկայացված բողոքը առանց քննության թողնելու մասին 26.04.2016թ. դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 29.04.2016թ. եզրակացությունը.

**<u>Ո Ր Ո Շ Ե Ց</u>**

Երևանի քաղաքապետարանի կողմից «Առողջապահության ապահովագրություն» փաթեթի ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ԲԸՀԾՁԲ-16/3 ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2016թ. N 2 արձանագրության համաձայն՝ Ընկերության գնային առաջարկը հետագա գնահատման համար անընդունելի համարելու, ինչպես նաև պայմանագիր կնքելու մասին որոշումները դադարեցնելու մասին «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից 13.04.2016թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության :

**Բողոքը քննող հանձնաժողովի՝**

**Նախագահ՝** **Գոռ Ենոքյան**

**Անդամ՝** **Տիգրան Գալստյան**